ՔՐԻՍՏԻՆԵ ԹԱԹՈՍՅԱՆ
Գործարար վարչարարություն,
կառավարում, մագիստրատուրա,
1-ին կուրս

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հիմնաբառեր. *ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակ, ՀՀ մարզային վիճակագրություն, զբոսաշրջություն, զբոսաշրջային ենթակառուցվածք, գործոնային խմբերի վերլուծություն*

ՀՀ տարածքային զարգացման և բնակչության զբաղվածության տեսանկյունից, զբոսաշրջային արդյունքի առումով կարևորվում է ծառայությունների ոլորտի ընդհանուր զարգացածությունը: Իրականացված գործոնային վերլուծությամբ առավելապես կարևորվեց գործազրկության և հյուրանոցային տնտեսության օբյեկտներում զբաղվածության ցուցանիշների համադրությունը: Արդյունքում՝ ՀՀ մի շարք մարզերում կա անհամադրելիություն զբաղվածության և զբոսաշրջությունը սպասարկող ենթակառուցվածքների ընդլայնման, ինչպես նաև ոլորտային հատկացումների իրականացման միջև:

Ներածություն: Զբոսաշրջությունը հզոր խթան է տնտեսության ճյուղերի ներգրավման և զարգացման, մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ներհամայնքային և միջհամայնքային կապերի ստեղծման և ամրապնդման առումով: Տարածքային անհամաչափության հիմնախնդրի ուսումնասիրության համատեքստում փորձ է արվել գնահատելու ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը՝ հիմք ընդունելով մարզերի և Երևանի սոցիալ-տնտեսական ցուցանիշների համապատասխան արժեքները ներառող վիճակագրական տվյալները: Միաժամանակ, ընտրանքային ցուցանիշների հետ մեկտեղ, դիտարկվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտներում ներգրավված աշխատողների թիվը, որը թույլ կտա համակողմանիորեն գնահատել տվյալ մարզի զբոսաշրջային զարգացման հնարավորությունները՝ ընդհանուր զբաղվածության և հյուրանոցային տնտեսության օբյեկտներում ներգրավված աշխատողների տեսանկյունից:

Մասնագիտական գրականության ակնարկ: Մեր իրականացրած՝ ՀՀ սոցիալ-տնտեսական և զբոսաշրջության ոլորտի ցուցանիշների համադրման վերլուծությունը թույլ է տալիս համակողմանիորեն գնահատել առկա ռեսուրսների օգտագործման հնարավորությունները: Վերլուծության համար հիմք է հանդիսացել ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, որտեղ ներկայացված ոլորտային իրավիճակը և սահմանված նպատակադրումները հնարավորություն են տալիս առավել խորքային վերլուծելու ոլորտի միտումները: Ուսումնասիրության փուլում մեծ կարևորություն են ստացել ՀՀ մարզերի ռազմավարական ծրագրերի փաստաթղթերը, որտեղ հստակ կերպով նշվում են տվյալ տարածքին բնորոշ առանձնահատկությունները՝ բնակլիմայական, բնապահպանական, ժո-

ղովրդագրական, տարածքային տնտեսական զարգացումը, ոլորտային հիմնախնդիրները: ՀՀ մարզային զարգացման և ոլորտային համադրման տեսանկյունից, չափազանց կարևորում ենք օրենսդրական դաշտի ուսումնասիրությունը, քանի որ վերջինս հիմնական դերակատարում ունի տնտեսության խնդիրների առկայության/բացակայության, ռեսուրսների արդյունավետ օգտագործման, բնակչության զբաղվածության և այլ հիմնախնդիրների առումով:

Մեթոդաբանություն: Մեր առաջադրած խնդիրների՝ տարածքային անհամաչափ զարգացածության, ՀՀ մարզերի և Երևանի միջև մեծ սոցիալական խզման, ինչպես նաև ոլորտային այլ խնդիրների համադրման արդյունքում իրականացվել է գործոնային վերլուծություն՝ փորձելով դիտարկել ՀՀ մարզերի հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (այսուհետ՝ ՀՏՕ) ներգրավվածների թիվը՝ զբաղվածության և գործազրկության համատեքստում: Առաջադրված գործոններից առանձնացվել են էականները, որոնք մեծ դերակատարում կունենան նոր գործոնային խմբերի ձևավորման առումով: Ըստ մարզերի համապատասխանության՝ փորձ է արվել առանձնացնելու համապատասխան մարզերը և դրանք դիտարկելու ՀՏՕ-երից ստացվող հասույթի և այդ ոլորտում ընդգրկված աշխատողների միջին ցուցակային թվաքանակի համատեքստում: Հետազոտության նպատակն է բացահայտել ՀՀ-ում խոցելի մարզերը՝ զբաղվածության և զբոսաշրջությունից ստացվող հասույթի տեսանկյունից և ներկայացնել այն գործոնները, որոնք էապես ազդում են տվյալ տարածքում բնական և աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման վրա: Վերլուծության համար հիմք են հանդիսացել երկրորդային տվյալների օգտագործումը վիճակագրական՝ տարածքային և ամբողջական ցուցանիշների կիրառմամբ:

Հետազոտության արդյունքներ և քննարկում:

ՀՀ սոցիալ-տնտեսական ցուցանիշների գործոնային վերլուծություն (զբաղվածության և գործազրկության համատեքստում): ՀՀ տարածքային անհամաչափ զարգացածությունը չափազանց նկատելի է բնակչության ուրբանիզացիայի, ՀՀ մարզերի և Երևանի միջև զբաղվածության մակարդակի և կենսամակարդակի մեծ ճեղքվածքի տեսանկյունից: Համաձայն ՀՀ կառավարության 2014-2025 թթ. ռազմավարական ծրագրի՝[1] վերջինս նպատակ ունի վերականգնել տեղական զբոսաշրջային հետաքրքրությունները և մշակութային ժառանգության վայրերը՝ խթանելով թիրախային մարզերում տնտեսական և այլ ենթակառուցվածքային ծրագրերի զարգացումը:

Փորձ է արվել ուսումնասիրելու ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական ցուցանիշները, որոնք կարող են ազդեցություն ունենալ զբոսաշրջային ռեսուրսների լիարժեք օգտագործման տեսանկյունից:

Աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշները հիմք են հանդիսացել գործոնային վերլուծության իրականացման համար դիտարկելու ՀՀ մարզերի հյուրանոցային տնտեսության օբյեկտներում ներգրավվածների թիվը՝ զբաղվածության և գործազրկության համատեքստում:

---

[1] ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, https://www.gov.am/files/docs/1322.pdf

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի և Երևանի սոցիալ-տնտեսական վիճակագրական ցուցանիշները պայմանական 10000 բնակիչ ունեցող համայնքում (2018 թ.)[1]

Մարզ/սոցիալ-տնտեսական ցուցանիշ	Բնական աճի գործակից (տոկոս)	Մեկ բնակչի ապահով. բնակմակ. (քառ. մ)	Հբաղվածներ (հզր. մարդ)	Կանանց զբաղվածություն (հզր. մարդ)	Տղ. զբաղվածություն (հզր. մարդ)	Գործազուրկներ	Թոշակառուներ (հզր. մարդ)	ՀՏՕ-ում աշխատողների միջին թվաքանակ
Շիրակ	23	31,4	2966	1458	1508	879	1687	590
Լոռի	-4	41,7	3251	1517	1734	727	2012	711
Գեղարքունիք	41	32,7	2701	1165	1536	272	365	520
Արմավիր	35	32,6	4278	1895	2383	769	1267	212
Երևան	53	24,3	2536	1245	1291	959	1587	135
Արարատ	42	34,1	3842	1697	2145	419	1391	290
Կոտայք	37	38,2	3144	1230	1914	1077	1467	338
Արագածոտն	27	45,8	3114	1334	1780	237	1470	413
Սյունիք	19	31,1	4061	1703	2358	639	1643	226
Տավուշ	3	48,3	2696	1229	1467	1172	1688	414
Վայոց Ձոր	29	39,9	2538	1032	1506	706	1870	383
Շիրակ	23	31,4	2966	1458	1508	879	1687	590

Առաջադրված գործոնների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են էականները, որոնք մեծ դերակատարում կունենան նոր գործոնային խմբերի ձևավորման մեջ: Դիտարկվել են որոշ մարզեր՝ ՀՏՕ-ներից ստացվող հասույթի և այդ ոլորտում ընդգրկված աշխատողների միջին ցուցակային թվաքանակի համատեքստում:

Աղյուսակ 2

Գործոնային վերլուծության ընդհանուր վարիացիան[2]

Բաղադրիչը	Սկզբնական սեփական արժեքներ		
	Սեփական արժեք	Բացատրվող վարիացիայի տոկոս	Գումարային տոկոս
1	4.388	43.878	43.878
2	1.824	18.239	62.117
3	1.547	15.466	77.584
4	1.194	11.940	89.524
5	.573	5.730	95.254
6	.356	3.561	98.815
7	.085	.847	99.662
8	.025	.245	99.907
9	.009	.093	100.000
10	2.151E-16	2.151E-15	100.000

Աղյուսակ 2-ից երևում է, որ ընտրանքային 10 ցուցանիշից ընդհանուր վարիացիայի 89.5%-ը կարելի է բացատրել որպես ներառված՝ 4 հիմնական գործոնների ազդեցությամբ:

Մեր ներկայացրած գործոնների ընդհանուր կառուցվածքը և նշանակելիությունը առանձնացվել են համապատասխան գործոնային խմբերում:

---

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, տարածքային վիճակագրություն, https://www.armstat.am/am/?nid=111

[2] Գործոնային վերլուծությունը կատարել է հեղինակը:

Ստացվել են 4 գործոնային խմբեր, որոնցից առավել կարևորում ենք առաջին երեքի նշանակելիությունը՝ վերջիններիս համապատասխան ցուցանիշների համադրելիության առումով:

Աղյուսակ 3

Բաղադրիչների շրջված մատրից[1]

ՀՀ մարզերի և Երևանի սոցիալ-տնտեսական վիճակագրական ցուցանիշներ	***Գործոնային խմբեր***			
	1	*2*	*3*	*4*
Բնակչության թվաքանակ	.178	-.142	.055	.928
Բնական աճ	-.007	-.943	-.101	.234
Մեկ բնակչի ապահովվածությունը բնակմակերեսով	-.353	.362	.097	-.613
Զբաղվածներ	.966	-.140	-.020	.205
Կանանց զբաղվածություն	.920	.064	-.142	.331
Տղամարդկանց զբաղվածություն	.931	-.289	.077	.092
Գործազուրկներ	-.040	.382	.833	.036
Թոշակառուներ	-.258	.819	.089	-.254
Նպաստ ստացող ընտանիքներ	-.601	.649	-.285	.331
ՀՏՕ-ում աշխատողների տարեկան միջին ցուցակային թվաքանակ	.008	-.157	.921	-.040

Վերը բերված արդյունքները մեկ այլ հանգուցային դիտակետ են մեր իրականացրած՝ գործոնային շրջված մատրիցի վերլուծության մեջ: Դրա տարրերը տեղեկատվություն են պարունակում յուրաքանչյուր գործոնի կառուցվածքի վերաբերյալ: Մատրիցի վանդակներում ամփոփված են գործոնային բեռնվածության ցուցանիշները, որոնք բնութագրում են ստացված գործոնների հետ ելակետային ցուցանիշներից յուրաքանչյուրի վիճակագրական կապի ուժգնությունը:

Աղյուսակ 4

Գործոնային արժեքները ՀՀ մարզերում և Երևան քաղաքում (համապատասխան գործակցային ցուցանիշներ)

Մարզ/Գործոնային խումբ	***«Զբաղվածություն՝ ըստ սեռային տարբերակման»***	***«Բնակչության պասիվ ռեսուրսներ»***	***«ՀՏՕ զբաղվածությունը և գործազրկությունը»***
Շիրակ	-0.61979	0.62796	-0.05421
Լոռի	0.08917	*2.24324*	-0.48861
Գեղարքունիք	-1.2735	-1.02091	-1.09828
Արմավիր	*1.62961*	-0.47798	-0.30659
Երևան	0	0	0
Արարատ	0.72677	-0.82641	-0.36029
Կոտայք	-0.50338	-0.83843	*2.15232*
Արագածոտն	-0.16878	-0.40338	-1.21864
Սյունիք	*1.55405*	0.03297	0.45112
Տավուշ	-0.52093	0.84787	*1.00061*
Վայոց Ձոր	-0.91322	-0.18493	-0.07744

Աղյուսակի 4-ի տվյալների համաձայն՝ գործոնային բեռնվածության ցուցանիշները ձևավորել են գործոնային որոշակի խմբեր: Առաջին գործոնի ձևավորման մեջ էական նշանակելի են եղել զբաղվածների, համապատաս-

[1] Գործոնային վերլուծությունը կատարել է հեղինակը:

խանաբար՝ կանանց և տղամարդկանց քանակական ցուցանիշները, որոնք դիտարկել ենք «Զբաղվածություն ըստ սեռային տարբերակման» գործոնային խումբ անվանմամբ, երկրորդ գործոնային խումբը՝ «Բնակչության պասիվ ռեսուրսներ»՝ հիմք ընդունելով թոշակառուների և ընտանեկան նպաստ ստացողների նշանակելիությունը, իսկ երրորդ գործոնային խումբը՝ «ՀՏՕ զբաղվածությունը և գործազրկությունը»՝ հաշվի առնելով մարզի զբոսաշրջային հնարավորությունների առաջիկա գնահատումը:

Այսպիսով՝ ստացված արդյունքներից ակնհայտ է դառնում, որ ՀՀ մարզերի և Երևանի միջև առկա է սոցիալական մեծ խզում:

Գործոնային արդյունքի համադրում՝ ըստ նշանակելի մարզերի:

Մեր ներկայացրած «Զբաղվածություն ըստ սեռային տարբերակման» գործոնային խմբում նշանակալի ցուցանիշներ են ապահովել Արմավիրի և Սյունիքի մարզերը: Նշված մարզերում, չնայած բնակչության ոչ էական տարբերություններին[1], նկատելի է, որ տղամարդկանց զբաղվածությունը կանանց զբաղվածության և ընդհանուր զբաղվածության ցուցանիշում ունի մեծ տեսակարար կշիռ: Մասնավորապես՝ Արմավիրի և Սյունիքի մարզերում տղամարդկանց զբաղվածությունը կազմում է ընդհանուր բնակչության համապատասխանաբար՝ 56%-ը և 58%-ը: Այսինքն՝ առաջին գործոնային մոդելի արդյունքներից եկանք այն եզրահանգման, որ Արմավիրի և Սյունիքի մարզերի աշխատանքային ռեսուրսներում տղամարդկանց մեծ ներգրավվածությունը ՀՏՕ-ում զբաղվածների թվաքանակի հետ համեմատական չէ: Վերջինիս ազդեցությունը տվյալ գործոնային խմբում բացասաբար է ազդում: Մասնավորապես՝ Սյունիքի մարզը կենտրոնացած է արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում, և նման արդյունքը պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի զարգացմամբ:

Ընդ որում, Սյունիքի մարզի արդյունաբերության ընդհանուր տեսակարար կշիռը ՀՀ տնտեսության ոլորտային կառուցվածքի ընդհանուր ծավալում շուրջ 17% է, զուգահեռաբար նշենք՝ 2018 թվականին Սյունիքի մարզի ծառայությունների ծավալում մշակույթի, զվարճությունների և հանգստի ապահովված հասույթը նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել է շուրջ 0,2%-ով[2] (հավելված 1):

Հարկ է ընդգծել նաև, որ Սյունիքի մարզում կանանց գործազրկության մակարդակն ամենաբարձրն է հանրապետությունում՝ կազմելով 66%, ուստի առաջարկվող գերակա ուղղությունների մեջ խիստ կարևորում ենք թեթև արդյունաբերության զարգացմանն ուղղված որոշ ծրագրերի իրականացումը: Մեր կատարած ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ դեռևս 2009 թվականից մարզում գործում է «Կապանի կանանց ռեսուրս» ՀԿ, որի գործունեության նպատակներից է զարգացնել տեղի կանանց բնակչության դերը մարզում՝ բարձրացնելով նրանց իրավագիտակցության մակարդակը, զարգացնելով և խթանելով նրանց հմտությունները: Կազմակերպության շինության տարածքում կա կիսաշեն արտադրամաս, որը 2019 թվականին իր գործունության հիմնական ուղղությունների մեջ ներառել է ներ-

[1] ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե, Տարածքային վիճակագրություն, https://www.armstat.am/am/?nid=111

[2] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ հիմք ընդունելով armstat.am կայքի տարածքային վիճակագրության տվյալները:

դրումային աջակցություն ունեցող ծրագիր, սակայն պլանավորված գործողությունները գրեթե անկատար են: Առաջարկում ենք ՀՀ կառավարության կողմից իրականացվող՝ համայնքների տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվեցիոն ծրագրի շրջանակում ընդլայնել ՀԿ գործունեության շրջանակը՝ ապահովելով կազմակերպության շարունակական գործունեությունը, որպեսզի կանանց գործազրկության մակարդակը մասամբ լուծելի դառնա մարզում:

Կարևորելով զբոսաշրջության զարգացման տեսանկյունից մարզերի բնակչության զբաղվածությունը՝ դիտարկենք երրորդ՝ «ՀՏՕ զբաղվածությունը և գործազրկությունը» գործոնային խումբը, որտեղ նշանակալի ցուցանիշներ են ապահովել Կոտայքի և Տավուշի մարզերը: Նշված արդյունքների դիտարկման համատեքստում հատկապես կարևորում ենք այս երկու մարզի գործազրկության մակարդակը, որոնք ՀՀ մյուս մարզերի և Երևանի համեմատությամբ ամենաբարձր ցուցանիշն են գրանցել (աղյուսակ 1):

Մեր իրականացրած գործոնային վերլուծության ժամանակ հատկապես մեծ ուշադրություն ենք ուզում դարձնել այն գործոնային խմբի վրա, որտեղ զբաղվածությունը և ՀՏՕ-ում ներգրավված աշխատողների թվաքանակը մեծ ներգրավածություն են ունենում գործոնի ձևավորման մեջ, ուստի այս համատեքստում առավել առարկայական վիճակը հասկանալու համար ներկայացնենք ՀՀ մարզերի զբաղվածության ցուցանիշները և ՀՏՕ համապատասխան ցուցանիշների խմբերը (շահույթ, աշխատողների թիվ)՝ փորձելով հիմնավորել Կոտայքի և Տավուշի մարզերի առանձնահատկությունները զբոսաշրջության ոլորտը սպասարկող ենթակառուցվածքի և գործազրկության տեսանկյունից:

Աղյուսակ 5

ՀՀ մարզերի և Երևանի զբաղվածության և ՀՏՕ-ների ապահովված արդյունքները

Մարզ/ զբաղվածության ցուցանիշ	*Զբաղվածների թվաքանակ, մարդ*	*ՀՏՕ քանակ*	*ՀՏՕ հասույթ, մլն դրամ*	*ՀՏՕ-ում աշխատողների տարեկան միջին ցուցակային թվաքանակը, մարդ*
Շիրակ	2966	24	309,7	74
Լոռի	3251	15	300,3	54
Գեղարքունիք	2701	9	186,3	21
Արմավիր	4278	3	20,4	11
Երևան	2536	320	22,825.3	2920
Արարատ	3842	20	120	120
Կոտայք	3144	57	2,289	428
Արագածոտն	3114	4	60,5	24
Սյունիք	4061	35	563,1	248
Տավուշ	2696	63	924,5	182
Վայոց Ձոր	2 538	19	900,9	108

Աղյուսակ 5-ի տվյալների համաձայն՝ դիտարկելով Տավուշի և Կոտայքի մարզը զբոսաշրջային զարգացման և հնարավորությունների տեսանկյունից, պարզ է դառնում, որ երկու մարզերի բնակչության եկամուտների զգալի մասը ստացվում է հյուրանոցային բիզնեսից, և, մասնավորապես, Կոտայքի մարզը ՀՏՕ-ում աշխատողների թվաքանակով երկրորդն է մայրաքաղաքից հետո:

Ընդ որում, Կոտայքի մարզի ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր կառուցվածքում շուրջ 6,7% է, որտեղ հարկ է ընդգծել, որ հանգստի, ժամանցի և մշակույթից ստացվող հասույթն իր մեծությամբ զիջում է միայն մայրաքաղաքին: 2018 թվականին, ապահովելով 75532,9 մլն դրամի եկամուտ, արձանագրվել է 14% աճ բազիսային տարվա նկատմամբ[1]: Նշված ցուցանիշը հիմնականում պայմանավորված է Ծաղկաձոր քաղաքի զբոսաշրջային նշանակությամբ: Սակայն, այստեղ ևս կան որոշ ոլորտային բացթողումներ, օրինակ՝ ծառայությունների ոլորտում տրանսպորտից ստացվող հասույթը 2018 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է 25%-ով, որը մեր իրականացրած ուսումնասիրության արդյունքում հիմնականում կապված է ներհամայնքային/միջհամայնքային տրանսպորտի ոչ այդքան պատշաճ վիճակի հետ (անհասանելիություն, ոչ սարքին վիճակ, անհարմարավետություն, երթուղու տվյալների թերի տեղեկատվություն), և արդյունքում տեղանք այցելող զբոսաշրջիկները նախապատվությունը տալիս են վարձակալած մեքենաներից օգտվելուն: Ստացվում է, որ տրանսպորտային ցանցի ընդլայմամբ և բարեկարգմամբ կունենանք գործազրկության մակարդակի նվազում, ինչպես նաև հնարավորություն կտրվի զբոսաշրջիկներին օգտվելու հարմարավետ և համեմատաբար մատչելի փոխադրամիջոցից:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Սյունիքի մարզի զբոսաշրջային հոսքերը նախորդ տարիներին գրանցած աճի հաշվին ունեն աճի միտում, սակայն եթե նույնը դիտարկենք 3-րդ գործոնային խմբում, որտեղ 0,5 գործակից է ընդունվել, ապա Սյունիքի մարզի զբոսաշրջային հոսքերի քանակը հնարավոր է մեծացնել միայն ոլորտը սպասարկող ենթակառուցվածքների ընդլայնման հաշվին: Զուգահեռաբար, ստացվող հասույթի և ներգրավված աշխատողների թվաքանակից հստակ է դառնում (աղյուսակ 5), որ այս մարզն ունի զբոսաշրջության զարգացման մեծ հնարավորություններ՝ ենթակառուցվածքների ընդլայնման, ինչպես նաև ոլորտային հատկացումների շնորհիվ:

Արմավիրի մարզը, զբոսաշրջային զարգացման առումով, դեռևս հեռանկարային չէ, սակայն ենթակառուցվածքների ընդլայնման հաշվին ևս կարելի է ստանալ երկարաժամկետ արդյունք: Ընդ որում, ծառայությունների ոլորտի՝ կացության և հանրային սննդի, մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների կազմակերպման ծավալը 2018 թվականին բազիսային տարվա համեմատ գրեթե կրկնակի աճ է գրանցել[2]: Սակայն, ինչպես երևում է աղյուսակ 5-ի տվյալներից, ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները, մասնավորապես՝ ՀՏՕ-ների քանակը և վերջինից ստացվող հասույթը, ամենափոքր թիվն են կազմում ՀՀ մյուս մարզերի համեմատությամբ: Ուստի ծառայությունների ոլորտի աճն առավելապես պայմանավորված է «Զվարթնոց» օդանավակայանի գործոնով, որը, որպես կապող հանգույց, մեծ նշանակություն ունի մարզի գրավչության և ծառայությունների ոլորտի զարգացման առումով:

---

[1] ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/am/

[2] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ հիմք ընդունելով Armstat.am կայքի ոլորտային ցուցանիշների տվյալները:

Եզրակացություն: Այսպիսով՝ ՀՀ զբոսաշրջության համընդհանուր և բազմակողմ զարգացման տեսանկյունից, չափազանց կարևոր են տեղի բնակչության ակտիվ ներգրավվածությունը մարզի զբոսաշրջային ռեսուրսների բացահայտմանն ուղղված գործընթացներին, ենթակառուցվածքների զարգացածության մակարդակը, զբոսաշրջային ռեսուրսների բացահայտումն ու գնահատումը, ինչպես նաև դրանց արդյունավետ օգտագործման ուղիների մշակումը:

Ընդ որում, երկրի մասշտաբով անհամաչափ զարգացածության խնդիրը դրսևորվում է մայրաքաղաքի և մարզերի միջև սոցիալական մեծ խզման, տեղեկատվության անհամաչափ բաշխման, ինչպես նաև ոլորտային վերահսկելիության բացակայության հետևանքով: Այս առումով, հատկապես կարևորում ենք մարզի/համայնքի հստակ և չափելի տվյալներ պարունակող զարգացման ծրագրերի մշակումը, որոնք կարտացոլեն վիճակագրական և վերլուծական մի շարք ցուցանիշներ՝ հետագա գնահատման և վերլուծությունների առումով: Եվ ՀՀ մի շարք մարզերում նույնիսկ ոլորտի զարգացմանն անհրաժեշտ ռեսուրսների առկայության դեպքում հանգում ենք դրանց ոչ ճիշտ կառավարման խնդրին, որն էլ տանում է ոլորտային լճացման:

Գրականություն

1. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73271
2. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/193/justification
3. «ՀՀ մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանությանը հավանություն տալու մասին» որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=82673
4. «ՀՀ համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/qax44-18_1.pdf
5. «ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», https://www.gov.am/files/docs/1322.pdf
6. «ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն», http://syunik.mtad.am /files/docs/29670.pdf
7. «ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարություն», http://armavir.mtad.am/files/docs/27693.pdf
8. «ՀՀ Հարավային միջանցք զբոսաշրջության զարգացման ռազմավարություն», http://documents.worldbank.org/curated/en/871171468000295118/pdf/103149-WP-P146596-Box394855B-PUBLIC-Armenia-Tourism-Corridors-Development-Strategy-March-2015-ARMENIAN.pdf
9. «ՀՀ Կոտայքի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր», https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2015/01/15_0040.pdf
10. Ազգային վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/am/
11. «Քաղաքացիական ակտիվություն խոշորացված համայնքում» ծրագիր, 2017-2018 թթ., http://sarapat.am/upload/DocFlow/Projects/Th188160119414115_SarapatActionPlan.pdf

Հավելված 1

Սյունիքի մարզի ծառայությունների ոլորտից ստացվող հասույթի մեծությունը** 2017 **և** 2018 **թվականներին (մլն դրամ)

Ոլորտ/Տարեթիվ	*2017 թվական*	*2018 թվական*
Ծառայությունների ծավալը, ընդամենը	35488,9	43632
Կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալը	1141,7	1351,7
Մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների ծավալը	14,4	11,3
Կրթության ծառայությունների ծավալը	619,4	523,3
Տրանսպորտի ծառայությունների ծավալը	23399,4	29338,5
Սպասարկման այլ ծառայությունների ծավալը	237,4	154,7

КРИСТИНЕ ТАТОСЯН
Деловое администрирование, менеджмент, магистратура, 1-й год

ФАКТОРНАЯ ОЦЕНКА ПОТЕНЦИАЛА РАЗВИТИЯ ТУРИЗМА И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО СОСТОЯНИЯ РЕГИОНОВ РА

Ключевые слова: *социально-экономическое состояние, региональная статистика РА, туризм, туристическая инфраструктура, факторный анализ*

С точки зрения территориального развития РА и занятости населения, общее развитие услуг в данном регионе является важным с точки зрения туристической продукции. В результате проведенного факторного анализа была подчеркнута важность сочетания показателей занятости безработицы и объектов гостиничного хозяйства в аспекте оценки туристических возможностей региона. В результате выявлено, что в ряде регионов РА существует несовместимость между занятостью и расширением инфраструктур, обслуживающих туризм, а также осуществлением отраслевых распределений.

KRISTINE TATOSYAN
1st Year, Master's Degree, Business Administration, Management

FACTOR ASSESSMENT OF SOCIAL-ECONOMIC SITUATION AND TOURISM DEVELOPMENT POTENTIAL OF THE REGIONS OF THE RA

Key words: *socio-economic position, regional statistics of the RA, tourism, tourism infrastructure, factor analysis*

From the point of view of the territorial development of the Republic of Armenia and employment, the general development of services in the region is important in terms of tourism products. As a result of the factor analysis, a combination of unemployment and hotel facilities was particularly highlighted in terms of assessing the tourism opportunities of the region. As a result, in a number of regions of the Republic of Armenia there is a mismatch in terms of employment and expansion of infrastructures serving tourism, as well as in terms of the implementation of industry allocations.